



## ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՓՇՐԱՆՔՆԵՐ

ՊՐՈՖ.—ԴՈԿՏ. Ա. ԱԲՐՈՅԱՆՑՅԱՆ

### ԴԱՎԻԹ ԱԼԱՎԿԱ ՈՐԴՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ

§ 1. Դավիթ Ալավկա որդու կանոնների մասին առաջին տեղեկությունները մեղ հաղորդել են նրան մոտիկ ժամանակակիցները. Այսպիս, 13-րդ դարի պատմիչ Կիրակոս Գանձակեցին Դավիթի կանոնների մասին հետևյալն է գրել. «... Դավիթ վարդապետն Ալավկայ որդի... գրեաց զկանոնական օրինադրութիւնս գեղեցկայարմարս և պիտանացու ի խնդրոյ քահանայի միոշ, որում անունն էր Արքայութիւն, ի քաղաքէն Դանձակարձ<sup>1</sup>: Վարդան Արևեցին Դավիթին ճանաշում է որպես «ղիկահաս» կանոններ Հորինող հեղինակ<sup>2</sup> («ղիկահաս» այստեղ ոման «ղուկամատչելի», «պարզ», «հասկանալի» իմաստը). Դավիթին հիշում են նաև Միթմար Արդիվանեցին, Ստեփանոս Օրբելյանը և ուրիշները: Պետք է ենթադրել, որ Դավիթի կանոնները, իր ժամանակին, լայն տարածում են ունեցել և մեծ ժողովրդականություն վայելել:

Տպագիր գրականության մեջ, Դավիթի կանոնների վրա առաջին անգամ կանգ է առել Հ. Մ. Զամշյանն իր «Պատմութիւն Հայոց» մեջ և բացասական կարծիք հայունել նա գտնել է, որ Դավիթի կանոնները գրված են պատուիսուն ոճով և անիմաստ բանիւք, ենթադրելով, որ նրանք աղճառվել են ընդորինակութ դրիշների կողմից<sup>3</sup>. Զամշյանի այս շիմնալորշած եղբակացու-

1. Կիրակոս Գանձակեցի, «Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1909 թ., էջ 107:

2. Վարդան Մեծ, «Պատմութիւն տիեզերական», Մոսկվա, 1861 թ., էջ 159:

3. Հ. Մ. Զամշյան, «Պատմութիւն Հայոց» հատոր 7, էջ 41:

թունը տառացի կրկնել են Ս. Սոմալը<sup>4</sup> և նրա աշխատության փերմաներեն թարգմանող նեյմանը<sup>5</sup>:

Ճետագայում Դավիթի կանոնների մրականգ են առել Հ. Գ. Զարբհանելյանը<sup>6</sup> և Հ. Հ. Տաշյանը: Վերջինս, խոսելով Դավիթի կանոնների մասին, համարել է նրանք «մեծ մասամբ խենթական բաներ»<sup>7</sup>:

Դավիթի կանոնների նկատմամբ եղած այս կարծիքները փորձել է ցրել հայտնի բանասեր Կ. Կոստանյանը իր «Դավիթ վարդապետ Ալավկա որդի» խորագիրը կրող արժեքափոր ուսումնասիրության մեջ, որը տպագրվել է «Ազգագրական հանդէսակ № 14 և 15 գրքերում: Կոստանյանը ցույց է տվել, որ Դավիթի կանոններն արտացոյում են իր ժամանակի իրավական նորմաներն ու սովորությունները, և այդ իսկ տեսակետից, հայ դրականական պատմության մեջ խորը արժեք են ներկայացնուած՝ նա ցույց է տվել նույնպես, որ Դավիթի կանոնները հայկական առաջին դատաստանագիրքն է համեմուացել—Միփիմար Գոշը օգտովել է Դավիթ Ալավկա որդու կանոններից:

Կոստանյանի այս արժեքավորումից հե-

4. M. P. S. Somal, „Quadro della storia etc.“, Venezia, 1829, p. 90.

5. C. F. Neumann, „Versuch einer Geschichte der Arm. Literatur“, Leipzig, 1836, p. 163.

6. Հ. Գ. Զարբհանելյան, «Հայկական հին դպրութեան», Վենետիկ, 1897 թ., էջ 662:

7. Հ. Հ. Տաշյան, «Եպուակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Միթմարեանց ի Վիեննա», 1895 թ., էջ 656:

8. «Ազգագրական հանդէսա», գիրը 15, էջ 67:

տո ևս Դավիթի կանոնները զարմանալիորեն մողվել են անուշադրության, չնայած Հ. Պ. Ալիշանն ևս իր «Հին հաւատք կամ հիթանուական կրօնք հայոց» աշխատության մեջ, հին հայկական հավատալիքների կատակցությամբ, բարձր գնահատական է տվել Դավիթի կանոններին և մի շարք մեջքերումներ արել նրանցից<sup>9</sup>, իսկ Հ. Բ. Սարգսյանը հրատարակել է Դավիթի կանոնների նախավերջին՝ 94-րդ գլուխում<sup>10</sup>:

Դավիթի կանոններին, նոր ժամանակներում, դրական տեսանկյունով, անդրադարձել են սովետական մեր հայագիտները: Այսպես, պրոֆ. Մ. Աբեղյանը գտնում է, որ Դավիթի կանոնները հայկական օրենքությի կազմման փորձն է, և այդ «երկը, իր տեսակով, մի նոր բան է եղել մեր հին գրականության պատմության մեջ և այդ նորն էլ ծնունդ է նոր մտավոր հոսանքի»<sup>11</sup>:

Վերցապես, Դավիթի կանոնների վրա, Կոստանյանի վերև հիշված հոդվածի հիման վրա, կանգ է առել հանդուցյալ պրոֆ. Խ. Սամվելյանը իր «Հայ իրավունքի պատմության» մեջ, բայց չի ծավալվել, որովհետև ձեռքի տակ չի ունեցել Դավիթի ձեռագիրը ընդորինակություններից ոչ մեկը: Նա միայն ցավով նշել է, որ «այդ դատաստանագիրը դիմում տպագրված չէ, ոչ էլ ուսումնասիրված, մեր գրականության մեջ կան միայն մի քանի կցկոտուր տեղեկություններ...»<sup>12</sup>:

§ 2. Դավիթ Ալավելա որդին 12-րդ դարի մատենագիր է, Ծնվել է 11-րդ դարի 70—80-ական թվականներին Գանձակ քաղաքում (Ներկայիս Կիրովարադ): Դավիթն ստացել է իր ժամանակի բարձր կրթություն: Հույս Վարդանի մի վկայության, նա ուժակից է հանդիսացել Հովհաննես Սարկավագ Խմաստասերին, որից և պիտի ենթադրել, որ նա կամ սովորել է նրա հետ միասին Հաղբատի վանքում և կամ միասին պաշտոնավարել Անի քաղաքում<sup>13</sup>: Դավիթ

9. Հ. Պ. Ալիշան, «Հին հաւատք կամ հիթանուական կրօնք Հայոց», Վենետիկ, 1910 թ., էջ 395, 404, 414, 434:

10. Հ. Պ. Սարգսյան, «Քննադատութիւն Ցովհան Մանդակունություն և իր երկասիրութեանց վրայ», Վենետիկ, 1895 թ., էջ 197—200:

11. Մ. Աբեղյան, «Հայոց հին գրականության պատմություն», Հատոր II, Երևան, 1948 թ., էջ 64:

12. Խ. Սամվելյան, «Հայ իրավունքի պատմություն», Երևան, 1939 թ., էջ 75:

13. Վարդան Մեծ, «Պատմութիւն տիեզերական», Մոսկվա, 1861 թ., էջ 159:

Ալավելա որդին երկար ժամանակ զբաղվել է մանկավարժությամբ<sup>14</sup>:

Դավիթը իր ժամանակի մեծ հեղինակություն ունեցող անձնավորություններից մեկն է հանդիսացել: Նրան ժամանակակից հիշատակագիրներից մեկը, խոսելով Արևելյան Հայաստանում աշքի ընկնող անձնավորությունների մասին, գործ է «Էր և յարեւելս Սարկաւագ վարդապետն՝ Հաղբատացին և անուանի Դավիթ որդի Ալոկայ և այլ բազումք աշակերտք և ընկերակիցք սոցաց<sup>15</sup>:

Թե որքան մեծ հեղինակություն է վայելու Դավիթը իր ժամանակակիցների կողմից: Կարենի է դատել այն փաստից, որ Դավիթը Գրիգոր վարդապետի հետ միասին միշնորդել են Ամենայն Հայոց Կաթողիկոսության առաջ, որն այն ժամանակ գտնվում էր Կիլիկիայում, որպեսզի Սղվանից կաթողիկոսական գահի վրա հաստատի Դավիթի եպիսկոպոսը:

Դամիթը մահացած պիտի յինի՝ 1139 թվականին: Ճիշտ չէ Սամվել Անեցու այն տեղեկությունը, որ իրը թե Դավիթը մահացել է Հովհաննես Խմաստասերի մահվանից մի տարի հետո: Մեզ որոշակի հայոնի է, որ Հովհաննես Խմաստասերը մահացել է 1129 թվականին: Այդ թվականից մի տարի հետո չէր կարող մահացած լինել Դավիթը ամի պատճառում: որ նա իր վերև հիշված միշնորդյունը Աղվանից կաթողիկոսի մասին արել է 1138 թվականին:

§ 3. Դավիթ Ալավելա որդու ձեռագրերը համարեն են 17 ընդորինակություններով, որոնցից 15-ը գտնվում են Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանում, իսկ երկուուն արտասահմանի մատենադարաններում՝ մեկը Վենետիկի Մխիթարյանների, իսկ մյուսը Վիեննաի Մխիթարյանների մուտ: Անհրաժեշտ ենք համարում տալ ձեռագրերի համառոտ բիբլիոգրաֆիան ըստ ժամանակագրական հնության:

1. Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռագիր № 5607 (918): Սկիզբը՝ թ. 177ա, կանոնների գլուխացանկից առաջ «Խարիթի վարդապետի մականուն Ալավելա (լ) որոի, վասն պէսպէս հարցմանց խոստովանութեանց, խարիթ զգուշացուցիչը ասացեալ», իսկ տեքստի սկզբում ունի նոր մերհասարի՝ «Հայոցնե առ սուրբ վարդապետն»

14. Կիրակոս Գանձակեցի, «Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1909 թ., էջ 188:

15. Գրեգորին Կաթողիկոս Հովհաննես, «Յիշատակարանը ձեռագրաց», Հատոր Ա, Անթիւպաս, 1952 թ., էջ 307:

Դակիր մականուն Ալավայ որդի համբակ  
բանանայի Արքայութիւն անուն, վասն պէս-  
պէս խոստովանութեանց քանից և պատահ-  
յանց եկելոց զգուշութեան, և նա լիապէս  
ասացեալ: — Հարցումն. Երէ զի՞նչ է որ յա-  
րաւած Աստուծոյ ռմանք սուրբ կոչեցան,  
ռմանք անսուրբ...»: Տեքստը վերջանում է  
թ. 238թ-ում: Ոմի 93 գլուխ: Գրիշն կ Ստե-  
փանոս: Գրշության ժամանակը՝ 12—13-րդ  
դար:

2. Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռագիր № 715 (612). Ավելացը՝ թ. 16ա. «Եւարիք վարդապետի է կանոննես: — Արդի սկիզբն կանոնաց վասն մկան գրեցաւ...», Վերջը՝ թ. 22ա: Գրիշն է Մարտիրոս քահանան, գրչության վայրը՝ Պողոս անապատը, ժամանակը՝ 13—14-րդ դար:

3. Հայկական ՍՍԻ Պետական մատենադարանի ձեռագիր № 839 (758): Ազիզը՝ թ. շա, կանոնների պլացանկն է, «Խրատ կանոնականք վերնագրով, իսկ բոլու տեքստը ակսում է թ. 6-ում». «Հարցումն պէսպէս խօստովանութեամբ բանից և պատամանց եկելոց ի գործութիւն, որը հարցեալ համբակ քահանայ, որոյ անուն Արքայութիւն կոչի՝ գԴափիր ուն քահանայ գիտեական»: Վերջը՝ թ. 123թ: Ունի 94 գլուխ: Գրչության ժամանակն է 14-րդ դար:

4. Վենետիկի Մխիթարյանների ձեռագիր  
№ 241. Սկիզբ՝ թ. 260ր. «Հարցումն պէս-  
պէս խստովաճութեան բանից և պատահ-  
մանց եկելոց ի գուշութիւն, որը հարցեալ  
նամբակ քահանայ, որոյ անոն Արդարու-  
թիւն կոչի՝ գթափը ուն քահանայ զիտեա-  
կան»: Վերջը՝ թ. 263ա: Դրիչն է Խաչատու-  
րը, գրչության վայրը՝ Կապոսի վանք (Եղեղյաց  
գավառ), գրչության ժամանակը՝ 1495  
թ.:

5. Հայկական ԱՍԴ Պետական ժամանակաբանի ձեռագիր № 2964 (87): Մկնդպը թ. 171ր. «Հարցումն պէսպէս խստովանութեան բանից և պատահմանց եկելոց ի զգուշութիւն, զոր հարցեալ համբակ հահանայ, որոյ անուն Արքայութիւն կոչի՝ զիտիք ոմն հահանայ զիտնական յոյժ»: Վերը՝ թ. 234ր: Ունի 101 գլուխ: Գրիշն չ Հովհաննես եղիսկոսառուց, գրության վայրը՝ Կոստանդնուպոլիս, պրության ժամանակը՝ 1562 թ.:

6. Հայկական ՍՍԲ Պետական մատենադարանի ձեռագիր № 3562 (1100). Ակիզը թ. 358ա. «Յանկ կանոնքոց Դաւիթի բանահյուսութեան»: Տեքստի մեջըսմ՝ թ. 360ա, նոր խո-

բագիր. «արցումն պէսպէս խօստովանութեան բանից և պատահմանց եկելոց ի (զ)գուշուրին, որ հարցեալ համբակ ժանանայ, որոյ անուն Արքայուրին կոչ՝ զիանանայ ոմն Դափիք զիտնական»: Վերը թ. 422թ: Ունի 98 գլուխ: Գրիշն է Արքստական Տարոնացին, գոշության ժամանակը 1597—1599 թ. թ.:

7. Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռագիր № 2576: Սկիզբ՝ թ. 160 ավան կծկի մկան որպէս է կանոնիք: Վերջ՝ թ. 166 թ: Գրիշն է Գրիփորը, գրլության ժամանակը՝ 16-րդ դար:

8. Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռագիր № 487 (491). Ակիզը՝ թ. 111ա. «Կանոնք, որը կարգեալ է Տօրի գիտնականի ի խնդրոյ համասայի միոց Արժայութիւն կոչեցեալ և հարցմունք նորա պէս պէս հարցմանց և խոստվանութեանց»: Վեր շը՝ թ. 130ա: Ունի 184 գլուխ: Գրիշն է Վարդանը, գրլության վայրը՝ Կարմիր վանք, գրչության ժամանակը՝ 1618 թ.:

9. Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռագիր № 652 (744), Ակիզը՝ թ. 88 թ. Ղասն մկանց հարցմանք և պատախանիք։ Վերջը՝ թ. 113 թ. Ունի 169 մանր գլուխներ։ Գրիշն է Գրիգոր կրտոնայոր, ժամանակը՝ 15—16-րդ դար։

10. Հայկական ՍՍՄ Պիտուալկան մատենադարանի ձեռագիր № 837 (756): Ակիզը՝ թ 203ա. «Երատ կանոնական սրբոյ Վարդապետին Դաւթայ հոգած (է)ալ ուրդոյ (յ) Ալակայ վասն մկան անկանելոյ»: Վերջը՝ թ 260բ: Ումի 93 դուկուս: Գրիչն է Գուշարիկը գրչութեան ժամանակը՝ 1627—1630 թվականներին:

11. Հայլիկան ՍՍՌ Գետական մատենադարանի ձեռագիր № 7060: Սկիզբ՝ թ 116ա. «Եւրաս կանոնական սրբոյ վարդապետին Դաւթայ հոգիացեալ որդոյ Ալական վասն մկան անկանելոյ յաղը»: Վերշը՝ թ 189ր, Ումի 93 զևուա: Գրիչն է Զաքարիան Կոշտիյան վայրը՝ Մոկք, ժամանակը՝ 1628թ.

12. Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռագիր № 835 (754). Ակիրքը՝ թ. 155ա. «Եւրաս կանոնական սրբոյ վարդապետին Քայլա (1) նոզացեալ (ա) ուրբա Ալակայ վասէ մկան անկելոյ...» Վերջը՝ թ. 200բ. Ուժի 93 պլում։ Գրիշն է Մարտիրոսը, գրչության վայրը՝ Բաղեշ, ժամանակը՝ կը 1652 թ.։

13. Կիենայի Մխիթարյանների մատենադարանի ձեռագիր № 256: Ալիքը, թ. 193 աշարժութեան պէսսէս խոստվանութեամբ բանից և պատահմանց եկեղեց ի զույգութիւն:

զար հարցեալ համբակ քահանայ, որոյ անուն Արքայութիւն կոչվի, զԴափիր ուն գիտնական յոյժ...»: Վերջը՝ թ. 221ա: Ումի 100 դրուիս: Գրիշն է Ավետիս երեցը, գրության վայրը՝ Կոստանդնուպոլիս, ժամանակը՝ 16—17-րդ դար (տես Հ. Հ. Տաշյանի Զեռուդուց ցուցակը, էջ 656):

14. Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռագիր № 648 (739): Սկիզբը թ. 78ա. «Թափիր վարդապետ Ալօկայ որդի, որ գրեաց զկանեական»: Վերջը՝ թ. 136թ: Գրչության ժամանակն է 17-րդ դար:

15. Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռագիր № 649 (741): Սկիզբը՝ թ. 126թ. «Հարցումն պէսպէս խոստվանութեան բանից և պատահմանց եկելոց զգուշութիւն, զոր հարցեալ համբակ քահանայն, որոյ անուն Արքայութիւն կոչվի՝ զԴափիր ուն քահանայ գիտնական յոյժ»: Վերջը՝ թ. 181թ: Ումի 101 դրուիս: Գրչության ժամանակն է 17-րդ դար:

16. Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռագիր № 931: Սկիզբը՝ թ. 84թ: «Եւրաստ սրբոյ վարդապետին Դաւթեայ հոգացելոյ որդոյ Աւաղիայ: Վասն մկան անկանելոյ յաղ»: Վերջը՝ թ. 166ա: Ումի 93 դրուիս: Գրչության ժամանակն է 17-րդ դար:

17. Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռագիր № 651: Սկիզբը՝ թ. 116թ. «Հարցումն պէսպէս խոստվանութեան բանից և պատահմանց եկելոց ի զգուշութեան, զոր հարցեալ համբակ քահանայ, որոյ անուն Արքայութիւն կոչվի՝ զԴափիր ուն քահանայ գիտնական յոյժ»: Վերջը՝ թ. 139ա: Միայն 40 դրուիս: Հնդորինակված է 1743 թվականից առաջ:

§ 4. Թվարկված 17 ձեռագրերը պատկանում են իրարից զգալապես տարբերվող հինգ խմբի: Առաջին խմբին պատկանում են № 3562 (Արիստակես Տարոնեցու) և № 648 (անանուն գրչի): Օրինակները: Այս խմբի ձեռագրերը Դավիթ Աւալիկա որդու կանոնները պահել են ավելի լրիվ — նրանք ունեն պատմիքատուկն ուղղված ընծայականը և մի քանի այլ գլուխներ, որոնք բացակայում են մյուս խմբերի ընդօրինակություններում:

Երկրորդ խմբին պատկանում են յոթը ձեռագրերը № 5607 (Ստեփանոս գրչի), № 839 (անանուն գրչի), № 2964 (Հովհաննես եպիսկոպոսի), Վենետիկի № 241 (Խաչատուր գրչի), № 649 (անանուն գրչի), Վիեննայի № 256 (Ավետիս երեցի), և № 651 (անանուն գրչի):

Այս խմբի ձեռագրերը շնայտծ աննշան պակասություններ ունեն, սակայն Դավիթի եղած բոլոր ձեռագրերի մեջ հնագույններն են: Անհամարժական չեն, որ այդ ընդօրինակությունների ամենահնագույնը՝ № 5607 ձեռագիրը, ընդօրինակության վիճակի լինի հեղինակի կենդանության օրոք:

Երրորդ խմբի ձեռագրերը համեմատաբար նոր շրջանի ընդօրինակություններ են: Այս խմբի մեջ մտնում են՝ № 7060 ձեռագիրը (Զաքարիա գրչի), № 837 ձեռագիրը (Գոհարիկ գրչունու), № 835 (Մարտիրոս գրչի) և № 9311 (անանուն գրչի): Այս խմբի ընդօրինակությունների տեքստը մոտենալու է սախորդին:

Չորրորդ խմբի ձեռագրերը երկուան են՝ № 715-ը (Մարտիրոս քահանայի) և № 2576-ը (Գրիգոր գրչի): Երկուան էլ թերի են, արտագրված են պակասավոր ձեռագրից: Առաջին ձեռագրի գրիշն այդ մասին ունի հետևյալ հիշատակագրությունը. «օրինակսախափակի էր»:

Ել, վիշշապես, հինգերորդ խմբին պատկանում են № 487 (Վարդան գրչի) և № 652 (Գրիգոր կրտսեղի) օրինակները: Այս խմբի ձեռագրերում Դավիթի կանոնները խիստ համառոտված են և կոտորակված. սովորական 100-ի մոտ կանոններն այս խմբում գարձիել է առաջնում 184, իսկ երկրորդում՝ 169:

§ 5. Կազմել Դավիթի կանոնների նշված հինգ տարբեր խմբերի ընդօրինակություններից մի համեմատական տեքստ, մենք գտնում ենք անհնար և աննպատակահարմար որպէս կառավագանք առաջնարկությունների ամբողքան անկարելի է: Նշված հինգ խմբերից հնագույնը և նախագաղափարին մոտ եղածը, մեր կարծիքով, առաջին երկուան են, սակայն դրանք ևս այնքան են տարբերվում, որը հնարավոր չեղավ նրանցից համեմատական տեքստ կազմել: Ուստի և մենք նպատակահարմար համարեցինք առ այժմ հրատարակել մեզ հայտնի ձեռագիր ընդօրինակություններից ամենից հնագույնը՝ № 5607 ձեռագիր ընդօրինակությունը (12—13-րդ դ.), տեղ-տեղ համեմատելով նույն խմբի № 839 ձեռագրի տեքստի հետ: Բայց Դավիթի կանոններն ամբողջացնելու նպատակով, № 5607 ընդօրինակության գլուխները մենք լրացրել ենք երկրորդ խմբի № 3562 ձեռագրի ընդօրինակությունից:

ԴԱԻԻԹ ՎԱՐԴԱՊԵՏ ԱԼԱԿԱՅ ՈՐԴԻ, ՈՐ ԳՐԵԱՑ ԶԿԱՆՈՆԱԿԱՆ ԱԽՐԵՆՍԴՐՈՒԹԻՒՆՆ  
ԳԵՂԵՑԿԱՅԱՐՄԱՐՄ ԵՒ ՊԻՏԱՆԱՑՈՒՆ Ի ԽՆԴՐՈՑ ՔԱՀԱՆԱՅԻ ՄԻՈՉ,  
ՈՐՈՒՄ ԱՆՈՒՆ ԷՐ ԱՐՔԱՅՈՒԹԻՒՆ՝ Ի ՔԱՂԱՔԻՆ ԳԱՆԶԱԿԱՅ

359ը

// ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ ԿԱՆՈՆԳՐՈՑ

- 5 Ի սրբազն խորհրդածութենէ, ի հոգոյն նախատեսութեանց տեսեալ եր-  
կիպական զարութիւն եւ ըստ յառաջադրութեան իմաստից, ի հոգի քո կա-  
ցելոյ երկիւլ Աստուծոյ, ի սէր պատոփիրանին յապատայս, զոր հանապաղ ըն-  
դունելով զատոփիրանին սէր, զանսխալ մնացելոյ առողջաբար յարգաւանդ  
եւ յարդիմարար միտս, անխառնապէս, միատեսափ, ահիւ կացեալ, ուստի եւ  
10 անծնունդ ոչ մնացեալ, երկնեալ երկ հոգէինք, ծնեալ ապա գիրկականն  
զբանն ի սատարութիւն բանասիրաց, ի գործնական քաղաքավարութիւն տնաւ-  
րինեալ՝ նախ զանձինս մատակարարել բարոյական: Եւ երկրորդացն տնտեսել,  
եւ որպէս կոչեցան խորհրդականք ի խորհուրդ ածելով զանխորհուրդ միտս:  
15 Բայ որում, եւ դուք համբակ ի նոցունց, յայնցանէ ի խորհուրդ ածեալ, որով  
յառաջատես աւծեալ եւ լրման ժամու եկեալ, յարաժամ ցուցեր ի քէն ծնունդ  
փրկական, առեր զարբազանն կարգ զբաւչականն եւ զնորին պահպանականն,  
զամենակարող, զմշտնչենաբուղն եւ զանհատականն, զարենական աղքիւ  
զբասավտակ երկնայնոյ զյորովանաբուղն գետն ի նորին հաղած եւ մթափա-  
րատ փայլակնակաւլ իմն զուածին հրոյ // ի կառուցումն մտաց բոց հարեալ,  
ուստի աշխատասիրեցեալ հարցանելոյ զյոքունս մասունս բանի՝ այլոց ան-  
տես եղեալ: Եւ ի քէն մանրաքնին տեսեալ եւ իմացեալ, եւ յինէն հարցեալ, եւ  
իմ ընկեալ զարութիւն մտի ի մասունս հարցական բանին քո եւ դիկուրուր ա-  
րարի, զի ծանիցես եւ խելամուա լինիցիս եւ հովուեցես ուղղապէս առաջ-  
նորդելով նորոյ ժողովրդեան Տեառն Խորայէլի: Եւ մի՛ զյսելիս տաֆես ի լուր  
բանիս, այլ եւ զատանելն յաւարեսցիս նախ յանձին քում ցուցեալ բանիւ եւ  
գործով կատարել եւ այսուհետեւ բանիւ ուստացանել եւ գործով զարդինակն տալ,  
զի բարիոք լինիցի ի հաճութիւն կամացն Աստուծոյ ամենայն քաղաքավարու-  
թիւն կենաց բոց՝ որ ի Քրիստոս Յիսուս:

360ա

- 20 25 Եւ ի քէն մանրաքնին տեսեալ եւ իմացեալ, եւ յինէն հարցեալ, եւ  
իմ ընկեալ զարութիւն մտի ի մասունս հարցական բանին քո եւ դիկուրուր ա-  
րարի, զի ծանիցես եւ խելամուա լինիցիս եւ հովուեցես ուղղապէս առաջ-  
նորդելով նորոյ ժողովրդեան Տեառն Խորայէլի: Եւ մի՛ զյսելիս տաֆես ի լուր  
բանիս, այլ եւ զատանելն յաւարեսցիս նախ յանձին քում ցուցեալ բանիւ եւ  
գործով կատարել եւ այսուհետեւ բանիւ ուստացանել եւ գործով զարդինակն տալ,  
զի բարիոք լինիցի ի հաճութիւն կամացն Աստուծոյ ամենայն քաղաքավարու-  
թիւն կենաց բոց՝ որ ի Քրիստոս Յիսուս:

## Ա. ԹԷ ԱՐԱՐԱԾՔ ԱՄԵՆԱՅՆ ԲԱՐԻ ԵՆ

- 38 Եւ արդ, նախ հարցումն քո այս է՝ եթէ զի՞նչ է, որ յարարածս Աստուծոյ  
ոմանք սուլր կոչեցան եւ ոմանք անսուլր:
- Քանզի Աստուծած բարի է եւ ամենայն տուրք բարիք, եւ պարգևեք կատա-  
րիալք ի բարերար Հարէն իշեալ առ իւր արարածս: Եւ զի ակզրնատիպ բա-  
րուրէ է Աստուծ, ի բարոյ բարի ստեղծան արարածք, որպէս ի լուսոյ՝ լոյս:  
35 Եւ ետես Աստուծած զյոյսն զի բարի է: Եւ ահա բարի են յոյժ ամենայնն, եւ  
շի՛ք ինչ ի նոսա խոտան ըստ բնութեան: Եւ այս ընտրութիւն յետ յանցանացն  
Աղամայ եմուտ յաշխարհս. ոմանք խոտեցան եւ ոմանք ընորեցան: Որպէս եգ  
Աղամ անուանս յար ըստ բնութեան ամենայն կենդաննեաց, եւ այն անփոփո-  
խելի // անուն գտաւ նոցա, նոյնպէս եւ յետ յանցանացն թոյլ տուեալ նմա ըստ  
179ա 40 վայելման: Նա ինքն աւրէնընտրողութեամբ առ ի պէտս իւր բժշկելոյ զկարիս

1. Այս գլուխը վերցված է № 3562 ձեռագրից. Մյուս խմբերի ձեռագրերը չեն պահպահվում:

32. Ա կատարեալ

36. Ա ըստ բնութեան շի՛ք

մարմնոյ, որպէս վասն դեղոց հնարեցաւ բնովթինս՝ ընտրել զաւտակարսն, նոյնպէս ընտրեաց գուտելի եւ զանուտելի կերակուրն՝ նշանակ տուեալ նմա իմաստովեան հոգույն, զի ետես գագանս շաղաղակերս թէ անուտելի են, եւ սողունս թէ խոտելի են եւ զոր ինքեանք խոտեցին, մարդիկ ոչ ուտեն: Աս-

- 45 տուած աւրինադրեաց նոցա եւ զոր հաճեցան եւ հաւանեցան ուտել, հաստա-  
տեաց եթէ կերայք իրուեւ զբանշար խոտոյ, զոր ոչ ընկալաւ բնովթինս, ոչ  
բռնադրատեաց Արարիչն բնովթեանս, որպէս եւ յաղագս իր՝ զոր ինչ տպատրե-  
ցին մարդիկ զԱստուած, եւ ոչ եւս էր մի յայնցանէ: Լոյս կոշեցին աւդ եւ հուր,  
աղքիւր, գիտ: Նա եւ ի գագանաց իսկ ա/նուն տպատրեցին նմա եւ յանձն  
180ա 50 առ՝ թէ եմ եւ այնու անուանէր զինքն աննախանձարար եւ երեւեցուցանէ կո-  
չեցելովքն վասն ընդունելուվեան, ո՞րշափ եւս առաւել վասն ինքեանց ընու-  
րութեանց յանձն առնոյր համութեամբ եւ հաստատէր աւրինաւք: Այլ հեթա-  
նոսք ո՛չ ընտրեցին զԱստուած ոմել ի գիտութին բնական, ճանաշել զԱրա-  
րիչն եւ զարարածս, այլ դարձան պաշտեցին զարարածս եւ ոչ զԱրարիչն, որ է  
55 աւրհնեալ յափտեանս:

Եւ զոր ինչ նոցա պաշտեցին յանբանիցն, զայն հրամայեաց ուտել, եւ  
զոր ուտէինն, զայն խոտան եւ պիղծ համարեցաւ Զկնջակաւորս եւ զորոնզող՝  
պաշտեցին եգիպտացիք, խորհրդագրար արփինաւք մեզ հրամայեցաւ ուտել եւ  
յիւր իսկ սեղանն մատուցանել պատարագս ի պատիւ փառաց նորա: Եւ զոր  
60 նորայն կերան եգիպտացիքն, անուտելի Կղեւ նոցայ մեզ ըստ աւրինացն, զի  
անխորհուրդք էին: // Իսկ սոդոմք, որ ոչ այսպէս ոմին, անուտելիք են եւ նո-  
րա, որպէս եւ զանազանեցան ի թոշնոց աւդականաց եւ ի ջրայնոց՝ մարդկան  
ընտրութեամբ: Արդ՝ զոր Աստուած զուգիաց եւ հաստատեաց ըստ բնովթինէ:  
բանի, մարդ ո՛չ կարէ մեկնել: Եւ զոր մարդ ընտրեաց եւ որոշեաց ի խիզչու

- 65 մտաց իւրոց, համեցաւ Տէր՝ մինչեւ աւրինադրեաց. ո՛չ նախանձեցաւ զնա  
զնախանձ արարջութեան իւրոյ ի զանազանել մարդոյն, այսինքն ի սուրբ եւ  
անսուրբ, քանզի ահա ամենայն բարի են լոյժ եւ լի՛ք ինչ նոսա զանազանու-  
թին խոտման: Արդ՝ պիղծ համարեալն ի մէնչ եւ յԱստուծոյ աւրինադրեալն,  
եթէ մերձենամբ, պղծիմք եւ պիղծն ի սուրբն մերձեցեալ պղծէ: Արդ, վասն զի  
70 բնուրութինն ի մէնչ է եւ աւրինադրութին յԱստուծոյ, վասն այնորիկ ոմանք  
սուրբ ասին եւ ոմանք // անսուրբ:

### Բ. ՎԱՍՆ ՄԿԱՆ ՑԱՂ ԱՆԿԱՆԵԼՈՅ

- Արդ, փոքրագոյն եւ անարգի, գողի եւ կծծի մկան եւ յորմափոր կենդա-  
նոյն սկսար զհարցումն քո, այն որ հակառակ ընդ դէմն զինի մեզ ոչ կառաւք  
75 եւ պալարակապ երիսարաւք, որպէս փարաւոնն ընդ դէմ իսրայէլի, ոչ զինուք  
եւ սպառազինաւք, այլ առաւել մահուամբ սպառնայ, քան կենդանութեամբ եւ  
գործովքն առաւել սպառնալիքն հաւատարմանայ նորա, խնամով շրջի որպէս  
զայցէ ի մահ իւր զվասն մեր, վասն այնորիկ երկնշմք առաւել ի մահուա-  
նէ նորա, սպրող եւ անյալտ է մուտ նորա, որ սա ինքն է մուկն: Բայց զրնգ  
80 դէմն նորա զի ի բազմաց անտի ի զապականեալն ի նմանէ զաղ ասացեր, եւ  
րարիոք էր հարցումդ, քանզի ամենայն անհամութիւն գոյից նովաւ համեմի:

- Արդ՝ անկեալ ի ներքս ի յաղ մովմն, գիտեա՛ եղբայր, քանզի է՛ որ պղ-  
ծի, եւ է՛ որ ոչ, զի ի գոճաց վերայ եթէ սպառակեսցի, զայն, որոյ վերայ էրն,  
նովմն ի բաց հանցեն // եւ որ շուրջ էր զնովաւ՝ լուասցին եւ այնուհետեւ սուրբ  
85 եղիցի առ ի պէտս վարել: Իսկ եթէ ի լիսածն անկցի ցամաք, եթէ պակաս իցէ շափ

լդեր շորից կամ հնդից, ամանաւն ի բաց հանցեն։ Իսկ եթէ տասին շափ ի վեր կոյս է, զնոյն որ պրեցաւդ շափ, ի բաց հանցեն յայնմանէ եւ զայլն սրբեսցեն եւ ամանն ցամաք անսավթ եղիցի։ Ապա եթէ թացեալ է, ի բաց հանցեն եւ այս ի դիտնականաց քննեսցի եւ ճշգրտեսցեն։ Իսկ եթէ յաղէն մինչդեռ մուկն ի ներք 99 իցէ եւ կամ ոչ յանգէտո ոք ընկենուցու ի սպաս եւ ապա գիտասցեն, զսպասն հանդերձ պոտկաւն ի բաց հեղցեն։ Ապա թէ կերեալ իցեն, քահանայն հանդերձ ընտանաւերն Ը (8) աւոր արտաքոյ կացցէ ի սուրբ խորհրդոյն կարգածութեամբ։ Իսկ այլ ժողովրդականք հինգ աւոր, յատկը Ճ (100) ծնդրիւ ապաշ-իսպահուցեն։ Իսկ եթէ ոք գիտաց եւ անփոյտ արար աներկեղութեամբ, և (40) աւոր պահնեցէ Ճ (100) ծնդրաւ։ Իսկ եթէ յաղախնաց ոք երկուցեալ ի տիկնոջ՝

182ա // իւրմէ արար ղախ, և (20) աւոր պահնեցէ եւ ամանքն, որ պղծեցան, խոր-տակեսցին։ Իսկ ի շոր մսի վերայ անկեալ, նովին փետրովն ի բաց ընկեսցեն զերկուան կամ զերիսն եւ զայլսն լուասցեն։ Արդ, որպէս վասն աղոյն գրեցաւ, եղիցի քեզ գիտել եւ վասն շոր մսոյ և սերեկեալ իւրոյ կամ ծեփելոյ, եւ ի

100 կարաս գինոյ ծեփեալ եւ անգինի, նոյնպէս լորոյ վերայ գտանփոյի սատակեալ, անխոտելի են ամանքն, եւ որ ինչ յամանին է։ Ապա եթէ ունայն իցէ ամանն քեկած, ցամաք անաւթ արասցեն։ Իսկ եթէ թաց անկանփոյի, կուրեսցի։ Այլ թէ՝ յալիր կամ ի ցորեան, նոյնպէս արասցես որպէս լեսած աղին գրեցաւ։ Իսկ եթէ ի թոնիրն գտանփոյի, մի քակեսցի թոնիրն յաղագս այնր, զի անհնա-105 րին է պատրաստութիւն։ Ապա եթէ յալրման ժամանակի անկանփոյի, յաւրին մը՝ եփեսցեն անդ հաց։ Եւ եթէ հաց ի թոնրանն է, // շունք կերիցեն՝ թէ յայնժամն անկցի, եւ եթէ յալլ կենդանեաց անկցի եւ սառակեսցի, թէ ի սրբոյ կամ յանսրբոց, թոնիրն քակեսցի ի հիմանց։ Այլ թէ ի թոնդրաւք կամ առ կութ մերձ գտանի, անվնաս են նորա եւ այլ ամհնայնք։

#### Գ. ՎԱՍՆ ՏԱՇՏԻ ԿԱՄ ՏԱՓՈՒՐԿԻ ԿԱՄ ՄՈՐԹԱՂԻ

116 Իսկ եթէ ի տաշտ կամ ի տափուրկի եւ յալլ ամանք զինչ եւ իցեն ի գործ լինիցին եւ գտանփոյի ի վերայ նոց, փայտեղէնն քերեսցին եւ հողեղէնքն լուասցին։ Իսկ ի ներքս անկեալ փայտն այրեսցին եւ խեցին խորտակեսցի, իսկ երկաթեղէնք, պղ(ի)նձն, արծաթն, ոսկեղէնք մի՛ խորտակեսցին, այլ շեռ-ցին միրայն հրով եւ սուրբ են։ Այլ թէ ի վերայ մորթաղի կամ քրծի, յորս իցէ կերակուր ինչ, կամ ձկան, հացի կամ մրգի եւ այլ կերակուր դինչ եւ իցէ, մի՛ խոտեսցին, բայց քուրդ լուասցի, իսկ եթէ ի ներքս գտանփոյի, տեսցեն թէ շոր է, եթէ խոնաւ, եւ իրին զայս առնէ, զոր // ասեմս։ Այլ թէ ի մորթաղին գոտա-նիցի, որ շոր եւ ցամաք իցէ, յայնը կողմանէ երիցս լդեր շափ ի բաց ընկես-120 ցեն եւ մասն ինչ աղքառաց տացեն եւ զայլսն հասարակաց կերիցեն, բայց եկեղեցականիցն։ Իսկ եթէ ի վերայ ընփուզոյ գտանփոյի, մի խորտակեսցին, բայց նթէ ի պատենիցն մերկացեալ խեղեկին յամանի, այնպէս արասցեն, որպէս աղին եւ ցորենոյն եւ ալերն։ Այլ թէ ի վերայ ծեծածոյ կամ գելասի գտանփոյի, 125 ամանքն խորտակեսցին եւ այլք որ պղծեցան ի նմա։ Եթէ յաղաղոյ գտանի, ամանքն խորտակեսցին եւ մորթքն լուասցին, ի պէտս լիցի հասարակաց, բայց յեկեղեցականաց։ Ապա թէ դեռևս անալաղ իցէ, նովին աղաղիցի։ Իսկ եթէ ի ցամաք մորթու գտանփոյի, ի բաց ընկեսցեն զմորթն։ Եւ եթէ ի վերայ // հան-գերձի գտանփոյի, լուասցեն միայն՝ թէ ասրեղէն իցէ, թէ կտաւեղէն։

90. Ա զապասն շի՞՞

106. Ա թորուանն

128. Ա վերայ կրկնվում է

130

## Դ. ՎԱՍՆ ՊԻՂԾԵԱԼ ԿԵՐԱԿՐՈՅ

Այլ թէ ի պղծեալ կերակրոց կամ յըմպելեաց ոք յանդէտս կերիցէ կամ ըմպիցէ, քահանալ ութ աւր արտաքոյ կայցէ ի սրբովենէ խորհրդոյ եւ ապա հաղորդիցին: Աշխարհականք Ե (5) աւ պահեսցեն Ճ (100) ծնդրածութեամբ: Իսկ եթէ գիտութեամբ իցէ, քահանայն լուծցի ի կարգէն, բայց վասն մարդասիրութեան Աստուծոյ, երկու ամ ապաշխարէ, զմի սրբապահութեամբ, եւ զմի՝ շաբաթապահութեամբ: Եւ աշխարհականն ամ մի շաբաթապահութեամբ: Խոյնպէս եւ ի շանէ զյազեալ կերակրու եւ ըմբելի արասցեն, զոր վերագոյնն ասացաք ի սատակեալ մկանէ պղծեն:

## Ե. ՎԱՍՆ ԿԱՏՈՒԱԿԵՐԻ

140

Թէ կատու յազեալ ի մորթաղէ, իսկ լիդր ի բաց կորեալ ծգեսցեն եւ մասն ինչ աղքատաց սայցեն եւ այլն սուրբ եղիցի: // Իսկ ի մկանէ՝ խոր քերեսցի միայն: Այլ թէ կատու զմուկն քերեալ կերիցէ ի վերայ կարատոյ կամ յայլ անապի ի փայտեղէնի եւ հողեղէնի, որպէս գրեցաւ վասն սառտակեալ մկան, ի վերայ կամ ի ներքս արասցեն: Այլ թէ (է) շուն կամ կատու ծնցին յամանի, անարդէ ամեննեւին: Եթէ ի վերայ շոր բանշարի սատակի մուկն, թէ յոլովէ, զվերայն ի բաց հանեալ եւ այլն սուրբ է: Իսկ թէ ի միջոցին է, զոլոն ի բաց ընկեսցին: Իսկ թէ կաղամբ հոր պտցի, շուրջ զնոսաւն ի բաց հանցի եւ այլն անխոտան է: Իսկ եթէ կատու կամ շուն ի ներքս անդ ծնցի, թէ յոլովէ բանշարն, զառաւելագոյն ի բաց հանցին, թէ պակաս՝ զամէնն: Իսկ եթէ սառտակեալ գտանի ներքս անդ, մի՛ վերիցի: Բայց շուն եւ կատու ո՛չ է միապէս. այլ ընտրութիւն լիցի որպէս կամին: Այլ մկան մտելոյ յաման կալեալ ոք արտաքոյ // սպանցէ, կատու ի ներքս կալեալ կենդանի ի բաց հանեալ կերիցէ. անխոտեղի է ամանն: Եթէ միջոցէ շուն կամ կատու զամանաւ արտաքոյ կար եղծիցէ զամանաւ, անխոտելի են: Իսկ եթէ ի ներքս լինիցի ապականութիւնքս, փոքր աման խորտակեսցի, թէ կարաս է բեկ(եալ), ցամաք անաւթ լիցի:

## Զ. ՎԱՍՆ ՄԿԱՆ Ի ՀՆՁԱՆ ԱՆԳԵԼՈՅ

145

Եթէ ի հնձան մուկն անգանիցի եւ յամենայն թաց աման անկեալն խորտակեսցին, այլ վերստին շինեսցին: Ապա թէ ի ցամաքութեան գտցի, ցամաք սատակեալ շուրջ զարդեաւն բացագոյն հանցեն զերեսս կրակապոյն եւ վերըստինն նորոգեսցին: Եւ եթէ ի փայտէ ի թացէ նաև անկանի, խոտեսցի ամեննեւին: Թէ ի ցամաք, յայլ պէտս ածցի եւ մի՛ գինոյ վասն սուրբ խորհրդին: Իսկ եթէ ի քարէ նաւ անկանիցի ցամաք, // առանց գինոյ յորոյ վերայ իցէ զքարն, զայն ի բաց հանցեն վասն շրջեսցեն եւ զայլ քարինսն քերելով տաշեսցեն եւ այնուհետեւ անխիղճ են: Իսկ թէ գինի ունելով նաւն ի ներքս անկանի, գինին հեղցի եւ նաւքն քակտի եւ զքարինսն յայլ պէտս առցեն: Ապա թէ անհնար իցէ, եւ քարինքն թանձր են, զամենայնն տաշեսցեն խոր եւ շրջեսցեն եւ վերստին նորոգեսցեն: Ապա թէ յառաջապատրաստակ ծովն հողով լցեալ լինի, անվնասէ, Աստուծոյ կամաւր, իսկ եթէ մինչեւ ի վեր կոյս ցկէսն ունայն իցէ, տաշեսցի, եւ որ լի է, միայն լուսացի: Իսկ ի վերայ կոյտոյ ողկուզացն գտեալ, նոյն արասցեն, որպէս վասն թացոյ գոլոյն, վերայ գրեցաւ Ապա եթէ ի տկուժ գտանի մուկն եւ յանգէտս ոք մատուցանէ առ հնձան ամանաւ ոք առե(ա) արկանիցէ ի տիկն եւ ի բերան տկոյն հասեալ ամանն ի բաց հանցեն, // զա-

140

յանն եւ զմնացեալ գինին, որ ի նա, մի՛ առցեն որպէս անսուրբ խորհրդոյ եւ խորհրդականացն, այլ արտաքոյ վարեսցեն ի պէտս որպէս եւ կամին եւ նաև սուրբ մնացէ, իսկ պղծեալ ամանքն ի տկոյն յայնմանէ ամենեւին խորտակեցին: Բայց քուրդամորթ տկոյն թեթեագոյն է, քան զայնոսիկ: Եւ գինին եւ կեցին: Բայց քուրդամորթ տկոյն թեթեագոյն է, քան զայնոսիկ: Եւ գինին եւ նաև այնպէս եղիցին, որ վերագոյն գրեցաւ եւ ամանքն, յորս անկաւ նձանն, այնպէս եղիցին, որ վերագոյն գրեցաւ եւ ամանքն, յորս անկաւ գինին, նզովն հանդերձ արտաքոյ ի պէտս վարեսցին, բայց ի սուրբ խորհրդականացն եւ ի խորհրդականաց նորա, իսկ հերձուցեալ մորթով ամենայն ուրերաւաւելեալ եղիցի, քան մկնանպին: Իսկ այլ փոքրագոյն ամանք քուրդագէն յորթով պղծեալ, ի բաց խոտորեսցին առաւել, քան մկնանպին:

### Է. ՎԱՍՆ ՄԿԱՆ ՈՐ Ի ԹՈՆԻՐՆ [ԱՆԿՑԻ]

186w Այլ դարձեալ գմկանէ, զի նորայն շար շատ է, քան զամենայն: Թէ ի թոնիր անկանի կամ յայլ անապթ, կամ // ի պոյտ եւ ի վերայ նոցա, այլ ինչ ըինիցի աման, այնոքիկ անվնասք են: Եւ ինթէ ի ներքս յայնը թոնրան կամ յայնը ամանի, յոր մոսկն իցէ սատակեալ եւ այլ փոքրագոյն ամանք իցեն ի ներքս, անվնաս են նորա, թէ պանրով լինիցի, եւ իւրով եփած եւ թէ մորթաղ, անխոտելի են այնոքիկ: Այլ թէ քարեղէն կամ այլ աման ի բերան կոյա լինիցի ի վերայ անաւթոց, որ պղծեալն է, ի բաց հանցին եւ նոքա, իսկ նթէ ի թիւ կանց կոյս՝ անվնաս է: Այլ թէ մըուզիզ, կամ ահսանողը, կամ ականջմուտ եւ այլ, որ ոչ արինատոր զեռունք են, որ են բզիզք եւ անկանիցի ի նոցանէ ի կարաս գինոյ կամ ի կաթն կամ ի թան որ յամանի, անխոտելի են այնոքիկ ամանապն հանդերձ, ապա թէ սիրտն ոչ առնու, մի կերիցէ, զի ագահութիւն է:

### Ը. ՎԱՍՆ ԳԱՅԼԱՌԻ, ՇՆԱՌԻ, ՆԵՏՈՎ, ՀԱՐԵԼՈՅ, Ի ՓՈՍ ԱՆԿԵԼՈՅ ԵՒ ԱՅԼՆ

186p // Այլ վասն գայլատի եւ շնառի, եթէ կենդանի ըմբռնե(ա)կ գենցին, ի պէտս ածցին, անխոտան (է), բայց եկեղեցականաց եւ ի քահանայիցն: Եւ ի հադորդականաց նոյնապէս: Եւ նետահարեալ գորսն եւ ինթէ ի գուրք ըմբռնեալ առանց շնչի գտեալ, մի կերիցեն եւ մի ամենեւին հուպ լինիցին: Այլ ի քահանայից եւ ի կանանց մի՛ իշխեսցեն որս առնել: Ապա թէ պոցի որսացեալ, մի՛ իշխեսցեն զենուկ, ապա թէ յանդգնեալ զենցեն, շունք կերիցեն: Իսկ ձուկն որսացեալ ի քահանայէ կերիցեն, որպէս վասն վայրի կենդաննաց գրեցաւ եւ ընդանի կենդանեացն է:

### Թ. ՎԱՍՆ ՍՈՒՐԲ ԱՆԱՍՆՈՅ, ՈՐ Ի ԾՆՈՒԽԴՆ ՄԵՌԱՆԻ

205 187w Այլ ի սուրբ եւ յուտելի կենդանեաց թէ ի ծնունդս մեռանի, մի՛ խոտեացն, ուստի եւ չէ՛ պարու քահանայից ճաշակել, բայց եթէ ագահեալ կերիցէ, Ը (8) աւր կարգա(լուծու)թեամբ մի պատարագեսցէ: Նոյնապէս թէ ձեռն որ ածեալ զերծուցանել զծննդագա(կանն) // եւ դարձեալ մեսցի, մի՛ խոտեացի, այլ հասարակ կերիցեն, բայց յեկեղեցականաց: Եթէ մորթեալ գուանիցեն ի նմանունդ շնչով, մի կերիցեն, զի որկորամուտթիւն է: Ապա եթէ ի շափ հասեալ, յորմէ եւ ի ծնունդս մեռանի, որ ծնան զնա, կենդանոյն առեալ արտաքոյ զենցեն, թէ ի պէտս բերցեն, լինի եւ ոչ խոտի:

185. Ա Թորուան

188. Ա քարեղայն

Ժ. ՎԱՍՆ ԱՅԼԱԶԳՈՅ ԶԿԵՐԱԿՈՒՐ ՄԵՐ ԸՄԲՈՆՆԵ

Այլազգոյ ի ձեռն առեալ հաց մի՛ ուստիցեն ևւ զթերըմպեալ գինսին կամ  
 215 զջուր մի՛ զմբրիցեն: Զարկեալն ի ներս զթերումպն նորա, նորնափէս եւ ձեռին  
 նորա մերձեցելոյ ի ներքս, քահանայք մի՛ արքցեն եւ մի՛ սրբութիւն անող մա-  
 տուցեն: Եւ կթէ յալով իցէ, արտաքոյ ի պէտս բերցեն, իսկ եթէ սակաւ ի բաց  
 հեղցի: Նոյնափէս թէ կամ կամ թէ թան՝ ի բաց եւս հեղցի: Ապա թէ ի մի՛ մի՛  
 կամ ի պանիր կամ լիւլ ըմբռնեալ իցեն, զըմբռնեալն կորեցեն եւ ի բաց  
 220 հանցեն եւ զայլն լուսացեն եւ կերիցեն: Իսկ զտուեալն ի նոցանէ մի՛ կերիցեն՝  
 187p զհաց, զպանիր, զմիս, զփաւարտ, // զփաղող, զփնփ, բայց յայնցանէ, որ  
 կտեսմին են՝ ընդույզ, նոտռն, խարթպակ եւ ալլք այսպիսիք, եւ ալնորիկ, որ  
 ի պէտս մարմնոյ բժշկութեան վարեն, բայց ի թիրակեաց, եւս պիղծ դեղոց:

ԺԱ. ՎԱՍՆ ԱՅԼԱԶԳԵԱՅ, ՈՐ ԶԱՅԳԻ ՔԱՂԻՑԵՆ

225 Այլազգի թէ քաղիցէ ձեռաւք, մանաւանդ թէ կորիցեն զհնձան եւ բերա-  
 նաւ կտրեալ զողկոյզն եւ զմնացորդս ի ներքս ձգիցեն: Արդ՝ զկորիեալն ա-  
 մենեւին մի՛ ածիցեն ի պէտս ումենք ի քրիստոնէից, բայց թէ ծանուցեալ նոցա-  
 վաճառեցեն ի նոսա, իսկ զքաղեալն զձեռաւք եւ զմնացեալն ի վերմանէ ըն-  
 կեցեալ ի ներքս, քահանայք ամենեւին մի՛ ըմպիցեն եւ մի՛ սրբութիւն անդր-  
 230 մատուցեն, բայց արտաքոյ որպէս կամին՝ վարեսցեն:

ԺԲ. ՎԱՍՆ ԶԱՄԱՆ ՆՈՑԱ. Ի Պ ԷՏՍ (ՄԵՐ ԱՄԵԼ)

Ալ ի նոցանէ զամանն փորձեալ ի պէտս մեր առնուկ մեզ ամենեւին ոչ  
 է մարթ: Եւ թէ ի նոցանէ կերակուր կամ միս յաման մեր մերձեցեալ, խոտելի  
 188w է ամենեւին: Իսկ եթէ կերեալ հաց յամանի մերտում, զմի անգամ // լեան՝ հար-  
 կաւոր լուացեալ ի պէտս ածցի: Ապա թէ սովորութեամբ բազում անզամ ան-  
 հոգացեալ զնոյն արասցեն, ի բաց խորտակեցի եւ մի՛ ածցեն ի պէտս: Եւ  
 եթէ զձեռն իւր յալեր մերձ հասուցեն, մի՛ խորտեցի հասարակաց, բայց ի  
 սուրբ խորհրդին մի՛: Եթէ ի ցորեան՝ անխոտելի է նա, թէեւ ի նոցանէ առնու-  
 ցումք ցորեան, բայց ալիւր ի նոցանէ խոտելի է, բայց թէ հարկ-լինիցի, զատ  
 240 ի սուրբ խորհրդոյն, այլ ի պէտս վարել:

(Չարունակելի)